

# Դ Ա Լ Ա Ր Կ Ե Ը Ն Ք

■ ■ ■ ■ ■

(ՎՈՐՈՇՈՅԻ ԵՐԻՑԱՍԱՐԴԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐՈՒՆ ԱՊԵՒԻԿ)

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Այսօր կ'աւարտի մեր յօդուածաշաբքը:

Դեռ բազմաթիւ ուրիշ փորձեր ալ կան, ամէն գիտուն տարբեր ճամբայ կը ջատագովէ. ոմանք քիչ շատ կը թարմացնեն մարդկային ծիւրած կազմուածքը իսկ, միւս կողմէ, քաղաքակրթիւնը աւելի կատաղութեամբ կը ծերացնէ մարդիկը:

Եւ սակայն գնահատելի է կատարուած փորձերուն արդիւնքը: Ճիշտ է, որ գիտունները հիմա անմահութիւն չեն խոստանար, հիմա չեն յաւակնիր կեանքը երկարել որոշ սահմանէ մը աւելի: Սակայն անոնք կը կարծեն թէ կարելի է ապահովել դալար կետնք մը, այսինքն՝ կեանք մը երիտասարդ, առողջ և գեղեցիկ: Մասնաւորապէս նոր վիրարուժութիւնը կարդ մը նուածումներ կատարած է այս ճամբուն վրայ:

Այդ նոր վիրարուժութեան ներկայացուցիչներէն է Վորոնովի, որ իր պատուաստի փորձերը կը կիրարէլ ոչ միայն ամորձիքի վրայ, այլ նաև ուրիշ գործարաններու վրայ:

Վորոնովի կ'ըսէ թէ, դիազնութեան համաձայն, մահերուն մեծամասնութիւնը արդիւնք է մեքենական ներքին խանգարումներու և արկածներու: Այսինքն, մարդիկ կը մեռնին ոչ թէ անոր համար, որ մաշած ու տկարացած են իրենց բոլոր գործարանները, այլ որովհետեւ ծանր պատճառ մը սպաննած է, ողջ ողջ թաղելով միւս գործարանները: Այսպէս, երբ մարդ մը կը մեռնի (ըսենք՝ արկածի մը հետեւանքով), զանազան գործարաններ տակաւին ողջ ու երիտասարդ են անոր դիակին վրայ: Օրինակ, մորթը կը պահէ իր կենդանութիւնը մահուընէ յետոյ՝ երկար ատեն, նոյնիսկ առնուուած է որ, դիակին վրայ, մօրուքը և մազերը երկնցած են մեռելին: Ուկորները կը մեռնին մահուընէ 18 ժամ յետոյ: Եթէ մահէն անմիջապէս յետոյ հանենք ոսկորները և պահենք, գեռ երկար ատեն կը դիմանան անոնք: Եթէ ոնուցանութին, ա'լ աւելի երկար: Ամերիկացի բժիշկ մը, տոքթ. Քարէլ, մեռելի մը վրայէն առնշղով գործարանական բջիշներ, զանոնք կը սնուցանէ գեռ, մինչդեռ դիակը թաղուած ու կազմալուծուած է հողին տակ:

Արդ, ինչո՞ւ մեռնեներուն ողջ ու երիտասարդ գործարանները չենել, պատուաստելու համար ծիւրած ու ծերացած մարմինները: Երբեք հակամարդկային չէ այս հարցումը. չէ որ բժիշկները, անհրաժեշտ պարագաներու մէջ, կ'առնեն առողջ մարդոց արիւնը և կու-

տան հիւանդներուն։ Արիւնն ալ գործարան մըն է։ Եւ գործարաններու այս փոխառութիւնը ամէննէն մարդկային գործն է, մանաւանդ երբ փոխ կ'առնուին մնաեններէն, որոնք պէտք չունին և ողջ ողջ պիտի թաղեն իրենց հետ։

Եւ Վորոնովի կոչ կ'ուզզէ, որ մեծ քաղաքներու մէջ բացուին հիւանդանոցներ, այսուեղ փոխադրելու համար մնաենները, որոնց վրայէն պիտի փրցուին երիտասարդ ու դիմացկուն գործարանները, պատուաստելու և գեղեցկացնելու նպատակով ողջերը։

Կայ նաև ուրիշ եղանակ մը պատուաստի Օրինակ, ունինք վիրաւոր մը, որուն ձեռքը կոտրած է և ոսկորը այլևս անդարմաննելի Անհրաժեշտ է ոսկոր մը գնել տեղը։ Ուրկէ գտնել Գիտէք, որ մեր որունքը կը բաղկանայ երկու ոսկորներէ, մէկը հաստ և միւսը բարակ ժամանակին, երբ ծառերը կը մազլցէին մարդիկ, պէտք ունէին այդ ոսկորին։ Մարդիկ մոռցած են հիմա այդ կեսանքը, և ոսկորն ալ կորսնցուցած է օգտակարութիւնը։ Այսօր, զրկուելով այս բարակ ոսկորին, ոչինչ կը կորսնցնենք։ Ուրեմն, կարելի է վիրաւորի մը սրունքին այդ բարակ ոսկորը հանել և տեղաւորել բազուկին կոտրած ոսկորին տեղը։

Գեղեցկագիտական վիրաբուժութիւնը հիմուած է պատուաստի եղանակին վրայի։ Շատեր, չնորհիւ այդ պատուաստներուն, գտած են իրենց կորսնցուցած մարմանական գեղեցկութիւնը, առանց որուն թերեւ աւելորդ նկատէին երկար ապրիլ։ Այսպէս, մարդ մը, որուն կզակը պատերազմի ընթացքին ոռմբը փրցուցած նետած էր, ուրիշ բնական կզակ մը ունի և կ'ապրի երջանիկ։ Վիրաբոյժները անոր սրունքէն հանեցին ոսկորը, ծնօտի ձեւ տուին, գլխուն մորթէն ալ ժապաւէն մը առին, և գարմանեցին վիրաւորին ահաւոր դէմքը։ Այժմ փառաւոր մօրուք մը ունի իր կզակին վրայ, որովհետեւ մորթը առնուած էր զլուխին վրայէն։

Վիրաբուժական այս եղանակներով կը դարմանուին հիմա բոլոր ծուռ քիթերը, երեսի սպինները, նոյնիսկ կարելի է աչքերուն տալ փափաքուած գոյնը Բազմաթիւ կիներ վիրաբոյժներուն կը դիմեն և զարմանել կուտան իրենց աչքերուն տակ բացուած արցունքի տպեղ ակօսը։ Արդի վիրաբուժութիւնը կրնայ ծիծերուն տալ կուտական դիրք մը, պինդ և ամուր։ Վերջապէս, արդի վիրաբուժութիւնը, չնորհիւ պատուաստումին, կրնայ երիկամ մը գնել թօքախտաւոր երիկամին տեղ, ձուարան մը գնել ամուլ ձուարանի մը տեղ։ Տոքթ. Մորրիս, 1895ին, փոխ առնուած ձուարան մը կարեց ամուլ կնոջ մը վրայ, և կինը, պատուաստէն յետոյ, աշխարհ բերաւ աղջիկ մը, չափազանց բնական պայմաններու մէջ։

Ահա այս է դալար կետնքը, արդիւնք այն փորձերուն, որոնք եթէ գեռ չեն կրնար տալ երկար կետնք, գոնէ անոր կուտան դալարութիւն մը, չնորհիւ սեռական գեղձերու ուժին, չնորհիւ վիրաբուժական զանազան պատուաստներու:

Թիշենք այս ապթիւ, որ սեռային գեղձերու պատուաստը իր օգուտը ունի նաև ճարտարաբուեստական տեսակէտէն: Այսպէս, Վորոնոփ ոչխարները սեռային գեղձերու պատուաստումով մը թարմացնելէ յետոյ, տեսած է որ առատ բուրդ կուտան: Այնպէս որ վաճառականական հեռանկարներ ևս կը ներկայացնէ պատուաստը:

Ափսո՞ս, որ սո՞ւղ են բոլոր այս պատուաստները, սեռային թէ գործարանային:

(Վերջ)

ԲԺ. Շ. ԱՅՎԱՋԵԱՆ

## ԲԱՂՆԻՔԻ ՏԾՄՆԸԲԸՆԵԾՑ

1. Զուրը ներսէն, ջուրը գուրսէն, ջուրը ամէն կողմէ, — ահա՝ արդիական բժշկութեան յորդորը գրեթէ բոլորիս:

2. «Մաքրութիւն՝ արքայութիւն» կ'ըսէր մեծ մամիկոս: Բայց ամէն բանին շատը դրումի համ կուտայ: Շաբաթը երկու անգամ լման բաղնիք բաւական է:

3. Ամէն առաւօտ պաղ ջուրով սրսկումներ (տուշ) կամ օծումներ օգտակար են:

4. Ցողնած մարդ մը պաղ ջուրով լուացուելու չէ:

5. Պաղ ջուրով լուացուելէ վերջ լաւ մը չտաքցող անհատներ լաւ է որ պաղ ջուրէ զգուշանան:

6. Գաղջ ջուրով բաղնիքը ջիղերը կը հանգստացնէ և քնարեր է:

7. Տաք բաղնիքէն չելած՝ մարմինը հետզհետէ պաղեցնելու է գաղջ կամ պաղ ջուրով, եթէ նպաստակդ քրանիլ չէ բաղնիքէն վերջ:

8. Նիհար երախանները երկու օրը անգամ մը լոգցնել կը բաւէ:

9. Շերերը երկար ատեն տաք ջուրի մէջ մնալու չեն:

10. Շաբաթը երկու անգամէն աւելի օճառ գործածել վնասակար է: Օճառը մորթին իւղը կ'առնէ չորցնելով զայն:

11. Ամէն օր մի քանի անգամ երեսնին օճառով լուացող մեր թուխ քուրիկները (ճերմկելու համար) շուտով կը քաւեն իրենց մեղքը աւելի սեւնալով և տգեղնալով: Մի մոռնաք: «Խելը խրատն ինչ ընէ, սեւը սապօնն ինչ ընէ» առածը:

12. Կալաքարային օճառներ կ'այրեն մորթը, երբ յաճախ գործածութիւն: Հայ տուներուն մէջ գործածուած սովորական ճերմակ օճառը բաւական լաւ է:

13. Փոխն ի փոխ, տաք և պաղ բաղնիքներ ջիղերը կը զօրացնեն:

14. Կուշտ փորով բաղնիք առնելու չէ: Որովհետեւ արեան արտախուժումը ստամոքսին գործը կը գժուարացնէ:

15. Բաղնիքէն ժամ մը վերջ ուտելու է:

ԲԺ. Դ. ԱԲԷԼԵԱՆ